



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻՐԱ ԵՎ, ՄԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈԶ ՄԱՅՐ ԱՐՈՌԵՑ

«Էջմիածն» ամսագրի 1960 թվականի Դեմքարում տպագրվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլի 25 թվակիր սրբառառ կնճղակը, Երիստոսավանդ սիրո ողջույնով և հայրապետական օրինուրյամբ, ուղղված Տաճե Կիլիկիի Կարողիկոսության, Երոսադիմի և Թուրքիայի հայոց Պատրիարքական Արքունիքին, Հայ Եկեղեցու հոգևորականության, թեմական խորհուրդներին և համայն հայ հավատացյալ ծողովրդին, որպես Մի՛Ռ ԵՎ Մի՛ՌԻՌ ՅԱՆ ՆՈՐ ԿՈԶ ՈՒ ՀՐԱՎԵՐ, Հայ Եկեղեցու հոգևոր իշխանության սուրբ բարձունքից, Անքիլիսասի Եկեղեցական ծանոք տագեապի խաղաղ և համերաշխ լուծման ի խնդիր:

Սանոր են բոլորին Անքիփասի եկեղեցական տագեապի շարժառիթենեն ու պատմությունը, որոնց ախոր հետևանքով, չորս տարուց ի վեր, «Երկփեղկիցան Ազգն ու եկեղեցին», ինչպես առաջնորդյամբ նշում է Վեհափառ Հայրապետը իր կոնդակում:

Մանոք են միաժամանակ այդ տազնապահի խաղաղ ու դրական լուծման նվիրված ընդհանրապես Մայր Արքունի և ի մասնավորի Վեհափառ Հայրապետի՝ որպես Հայ նկեղեցու հոգևոր գերազույն իշխանության Պետի՝ անշահախնդիր վերաբերմունքը, բազմաթիվ ջանքերն ու հորդորեները, խաղաղասիրական կոչերն ու հաշտության առաջարկները, ուրնեմ, սակայն, դժբախտաբար միշտ մնացին «ձայն բարբառոյ յանապատի», որովհետև ու «մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է» (Հռովմ. ԺԱ. 15):

«Մեր սիր խոսք, Մեր համերաշխորյան
և միուրյան նորդառեցը, — գում է մի ան-
զամ ևս վշտով Վեհափառ Հայրապետ, —
չկրցան մեղմել այեկոծնող կիրքեցը»:

Ամենապատիվ Տ. Գարեգին պատրիարքի,
Երևանի Աթոռի, Հայկական Բարեգոր-
ծական Ընդհանուր Միության և մեր քար-
բաստիճան այլ հոգևորականների և սրբ-
ակ ազգայինների փորձերը մեացին անար-
ձագանք:

Այնուամենայինիվ Վեհափառ Հայրապետը
շնուսահատվեց. շորս տարի շարունակ մրտ-
նով տաճբվեց, տագնապեց, որպես արքուն
պահակը Հայ Եկեղեցու, հսկելով Հայ Եկե-
ղեցու պապանվության վրա, քրիստոնեական
անկուտրում հույսն ու հավատը սրբում, և
արեց անհրաժեշտ ամեն իիչ՝ առաջըլ առնե-
լու համար Եկեղեցական առողջության:

«Ի տես այս բոլորին, Մեր սիրառ վիշտով լեցվեցավ, բայց երբեք չկուսնցուինք Մեր հույսը և Մեր լավատեսուրյունը Հայ նկեղծվո միությունը և խաղաղությունը վերականգնելու Մեր ենիքին մեջ: Մանոք են բոլորին Մեր բազմարիկ փորձերը այս աստվածահան և ազաշեն համեստն Արա»:

Եվ անա այսօր, եկեղեցական այս տիսուր տագեսապի առաջ մտահոգ, վշտահար բայց միշտ լավատես, Վեհափոխ Հայրապետը խաղաղ ուրտով, հստակ աշենրով և պայծառ մտածումներով գտնում է, որ ժամանակն է այլևս վերջ տալու եկեղեցական այդ տագեսապին, և ՀԱՅ եկեղեցն ՄԻՈՒԹՅՈՒՆԸ եկ ԽԱՂԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ վերականգնելու ազնիվ մտահոգությամբ, մի անգամ ևս սրտագին երավեր է կարդում բոլորին ասելով. «Մեր հայացքը սևեռած Ս. Լուսավորչի անմար կանքենին, անգամ մը ևս կողրանք մեր եկեղեցկո այս տիսուր կացության վրա և վերըտին սիրո և միության երավեր կկարդանք բոլորին»:

Ապրիլ 25 թվակիր հայրապետական կոնդակի ոգին շինարար է և դրական, որը մի անգամ ևս ամփոփում է մինչև այժմ կատարված հաշտության քանիները և միաժամանակ հանդիսանում է մի առաջընթաց քայլ՝ Անքիլիասի և կեղեցական տազբանը համերաշխուրյամբ և խաղաղությամբ լուծելու հանապարհի վրա: Վեհափառ Հայրապետը եր 3 մայիսի թվակիր Գտաբղին պատրիարքին ուղղած մի համակում, խորհրդածելով կոնդակի ոգու և նպատակների մասին, գրում էր հնտայալը. «Կատահ ենք, քե կոնդակը Ձեր սրտին պիտի խստի. ինչպես Դուք բազմիցս արտահայտված եք և բարի փորձեր ալ կատարած, ժամանակը հասած պետք է նկատենք ելք մը գտնելու կիլիկյան Արքոնք ներս հաշտության և բնականն վիճակ ստեղծելու համար, կազմերու համաձայնուրյամբ և փոխազարձ գիշումներով: Մայր Արքոր կողմ չէ և չազեր ըլլալ: Մայր Արքոր մեկ իղձ ունի միայն, որ վերջ գտնեն երկիֆեղկումը, Զարեն եպիսկոպոսի կարողիկոսուրյան օրինականացումով և Արքոններու պատմական իրավասուրյանց վերահստատումավ: Բաց սրբառով, ուրախ սրտով գրեցինք Մեր այս կոնդակը և լավատեսուրյամբ: Եթե Անքիլիասի մերժումի կամ լուսուրյան քարին չզարւելինք, հոյս ունինք, որ այս տարի հարմար անդ մը կրնա տեղի ունենալ հաշտարար և խաղաղարց ժողով մը»:

Կոնքակը հարազատ և կենդանի արտահայտությունն է Վեհափառ Հայրապետի խաղաղասիրական խոների, հաշտության մոռցումների, և կոչված է փարատելու այն ծանր տագեապը, որը ճեղում է հայ հոգիների վրա, ավելի բան անս չորս տարիներից ի վեր: Կոնքակում Վեհափառ Հայրապետը վառկերպակ և հանգամանուրեն խոսում է եկեղեցական միությունը վերականգնելու անհրաժեշտության վրա: Վեհափառ Հայրապետը հաւաքառում է հայ ժողովրդի ողջ մրտության, կորովի և ազնվության վրա, և սրտագին կոչ է անում, որ վերջ գտնի եկեղեցական տաճեապը, այն բարձր պատասխանատվության զգացումով, որ «Եկեղեցական և ազգային աղետի վերածվաղ այս կացության առաջ, անձնական հեղինակության խնդիր հարուցել պիտի եշանեկեր հոգեկան տկարություն և ընդհանուր շաբի գիտակցության պակաս»:

Ընդհանուր այս կացության առաջ, Վեհափառ Հայրապետը հաշտության գործեական առաջարկենքը է բրում ամենաանկեղծ մադրություններով. «Ուրեմն Մենք, անվարան և անկեղծավոր սրտով կոչ կընենք ամենուն անխստիր, որպեսզի պահմիք ու պահպանվի, իրեւ կյանքի սրբազն կանոն, Հայ եկեղեց-

վո միարյունն ու ամբողջությունը, Ամենայն
Հայոց հախամեծար Մայր Արք Ս. էջմիա-
ճեպ, որպեսզի միացյալ նիգերով և փոխա-
դարձ զիանմենով վերահստանի համե-
րաշխ գործակցությունը Մեծի Տաճե Կիլիկիո
Արքունի և պառակաված քեմերեն ներս մեր
Եկեղեցքո կանոններուն, ավելություննե-
րուն և Եկեղեցապետական Արքուներու պատ-
մական իրավասություններուն լոյսին տակ»:

Հայրապետական զնուրակ ուղարկում էր միտքն այս է, որ նեղեցու մեջ պայքարենք և հերձումներ չկինեն ու նեղեցու զավրում վար դրվագ բոլոր զենքերը: Ապրում ենք պատասխանառու ժամանակների մեջ, մեկ կորմ բռնենք հայ կյանքի մանրութենքը, «ունի անհատական, խմբակցական շահերը», և մեր ուշադրությունը կինտրունացնենք՝ առավել կական, համազգային հարցերի վրա, ինչպիսիք են Հայ եկեղեցու միարյունը, հայ կյանքի ներքին խաղաղությունը և Սփյուռքի մեջ հայապահպանման մեծ գործը, որը, Վեհափառ Հայրապետի բնուրացրմամբ, «երամայկան թելադրանքն է մեր նեղեցվող կանոններան, մեր ազգային պատմության և մեր ժողովուրդի գերազույն շահերուն»: Վեհեր, տարականածություններ կան ու կինեն: Բայց այդ բալորը շպետք է վերածվեն ազգային ողբերգության և խոշքնոտնեն Ազգի միարյունը և եկեղեցու միասնականությունը: «Երեքակի ի վերայ բարկութեան ձերոյ մի՛ մատց» (Սփիս. Դ 26): Ի՞նչ է հարկավոր այսօր մեզ, որպես ժողովուրդ և եկեղեցի: Մի՛ Ութ ՅՈՒՆ ԵՎ ԽԵՂԱԾՈՒԹՅՈՒՆ. «պահել զմիաբանութիւն Հոգոյն» (Սփիս. Դ 3): «Քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած» (Սկորնը. կ 17):

Սիրո և միուրյան այս եռ կազը տագեաապի
լուծման բնական եղանակն է: Մայր Արուր
առաջնորդվում է միշտ բարի մտադրություն-
ներով: Հաշտուրանից և խաղաղությունից
ոչ ոք չի տուժի: Հարցի լուծման ամենանիշա-
նանապարհը Վեհափառ Հայրապետի առա-
ջարկն է. «Եթ մեզ զպաշտօնն հաշտութեան»
(Բ Կորեք. Ե 18):

Վեհափառ Հայրապետի սիրո և միուրյան
կոչք առաջին ներքին հասցեագրված է «Ան-
թիլիսի ներկա արքունակալին» Զարեն սիրե-
ցյալ եղբարբ Մեր, որմէ շորս տարիներ առա-
համբուրիլ բաժնվեցանք, — գրում է Վե-
հափառ Հայրապետը, — Մեր մեկնումի
տխուր օրը, ուրախ օր մը վերսախն ողջա-
գուրվելու քաղցր հույսով»:

Վեհափառ Հայրապետի նոր նախաձեռնությունը հույս և հավատ է ներշնչում իր մաս դրայքանենքի անկեղծությամբ, բացառությամբ. Կարելի է վստահ լինել, որ «անձնական» համար պահպանում մը» Վեհափառ Հայրապետ

տի և Անրիիասի սրբազն արռողջակալի միջն, կարող է միայն օգտակար լինել և Մայր Արքունին, և՝ Անրիիասին: «Այս ոգիով ներշնչված ու գոտեպնդված, — գրում է Վեհափառ Հայրապետը, — կառաջարկենք, որ այս տարվան ընթացքին, հարմար բժականի մը, տեղի ունենա ժողով մը, Մայր Արքունի պատվիրակներու և Կիրիկյան Արքունի երկու կողմերու ենեկայացուցիչներու միջև, հույժ փափագիլ գտնելով նաև, որ Մենք ևս անձնական հանդիպում մը ունենանք Տաճան Կիրիկյան սրբազն արռողջակալին հետ համրապետում մեր սիրո միության և ի շինության մեր Ս. Եկեղեցվո»:

Ապրիլ 25 բժակիր կոնդակը ընթունվեց զանոնակուրյամբ և ուրախությամբ: Վասահ ենք, որ Անրիիասը ևս կրածանի Մայր Արքունի այս նույն մտահոգությունները և էջմիածնից հասած նոր կոչք կզնահատի ըստ արծանվույն, հօգուտ Հայ Եկեղեցու և ի շահ հայ ժողովրդի, որովհետև «Մենք մեկ Ազգ ենք և մեկ Եկեղեցի, և մեկ հավատք ունինք՝ Փրկչի էջման Ս. Տեղով, ամենայն հայոց Ս. էջմիածնով, որ Ս. Լուսավորչի օրերեն միջն մեր օրեր եղած է ու կմնա աստվածադիր միակ զբուխը Հայաստանյաց Եկեղեցվու և հոգևոր գերազույն հենդինակուրյուններ մեր Եկեղեցվու հվիրապետության և համայն հայ հավատացյալ ժողովուրդի: Ս. էջմիածնի օրենուրյամբ, մեր Եկեղեցինեն ներս և մեր Եկեղեցիով պետք է պահենք և ամեն գնով պետք է պահպանենք ի սփյուռս աշխարհի ցրված մեր ժողովուրդի հոգեկան միությունը»:

Վեհափառ Հայրապետի հաշուության և համերաշխության առաջարկը շատ կոնկրետ է, հստակ և արդար: Սիրու և միության այս նոր կոչք մեջ, միահզամ ևս մարմենավորվում է Մայր Արքուն Ս. էջմիածնի հոգեւոր իշխանության ամբողջ հմայքը: Այդ կոչով նորից Մայր Արքուն ու Վեհափառ Հայրապետը կանգնեն ին իրենց պատմական առաքելության նվիրական բարձունքի վրա: Մայր Արքուն է միության ամուր կապը «Արքակալ բաժանված» հայության բեկարենքի միջև: Լսենք միության այս նոր կոչքը, որ գալիս է պատմության էջերով՝ Ս. էջմիածնի հոգեւոր բարձր Գահից, որպես սրբազնի հրավեր, որ սիրեն ու գուրգուրանք, պահենք ու պահպանենք «ամբողջ ու անխոռվ» այն միակ համազգային, սուրբ հաստատություններ, որ Հայաստանյաց Եկեղեցին է, խորհրդանշական Փրկչի հրաշափառ սուրբ իշման տեսիլքով և

մարմենավորված, շոշափելի և զգալի դարձած Ամենայն Հայոց Հայրապետությամբ:

Այսօր, ինչպես անցյալում, Ս. էջմիածնին իր հոգեւոր և ազգային առաքելության հանապարհի վրա է կանգնած: Ս. էջմիածնին համազգային սրբավայր և հավատի կենտրոն է, որպես «Սուրբ և աստուածային Քիսառսակերտ և լուսանկար ամենից հայոց Արքուն էջմիածնին... Մայր ամենայն եկեղեցեաց և շնորհածին ծեռլ նոցին մանկանց և յԱրքունակապէս Ազգին Հայոց» («Զամբռ», էջ 6), ու նաև որպես հոգեկան անհակտելի կապ, որը միացնում է հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Հայրապետի կոչի և բաղզոր խոսի առաջ պետք է լոեն բալոր կրեւը: Մեղավորներ շինտոնենք և շնչտենք տագիապի մեջ կողմերի պատասխանատվության շափերը: Այդ տագիապը շպետք է ստեղծվեր: Ստեղծվեց, հակառակ Մայր Արքունի կամքին: Բայց եղածը պատճան՝ է արդյոք, որ շարունակվի ողբերգությունը Հայ Եկեղեցու ծոցում և հայ նոցիների մեջ:

Վեհափառ Հայրապետի սիրու և միության հրավերը, վասահ ենք, թե անխտիր բալորի սրակին պիտի խոսի և նիշտ ժամանակին է զալիս: Զգում ենք, թե բալորը սպասում էին նրան և ստեղծվել է տագիապի լուծման բարերար մրենորար: Մնում է, որ իմաստությունը ունենանք արմատախիլ անելու ամեն բալոր և ծուռ մտածումներ: Համազգային միացյալ նիգերով, ազգուին նվիրվենք, ինչպես սրտավորնեն նշել է Վեհափառ Հայրապետը, «Ս. Եկեղեցվու հովանիին եներնե... մեր ժողովուրդի հոգեւոր, իմացական և յոյրական ուժերու» մեկտեղումով, «Սփյուռքի հայության ազգապահանության սրբազն գործին, մեր օրերու մեծագույն հարցը, որ դրված է մեր առաջ»:

«Ահա օր փրկութեան» (Բ Կորնք. ջ. 2): Ահա «ամ փրկութեան եկեալ հասեալ» (Եսալի կդ. 4):

«Թող իմաստության լույսը և ավետարանական սերն ու խաղաղությունը իշենք մեր բոլորիս վրա և առաջնորդեն մեզ, որպեսի ծեռլ-ծեռի տված խաղաղություն ընենք մեր Աղորքի տունին մեջ և լծվինք ազգաշնի գործի», — բարեմաղբում է Վեհափառ Հայրապետը:

Իսկ բոլանդակ հավատացյալ հայ ժողովուրդը, հեռվից և մոտիկից, ձայնակցում է իր խաղաղասեր Հայրապետի բարի ցանկություններին.

«Եղիծին, Եղիծին են Եղիծին»:

